

ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերի համար հաշվետվողականության և մշտադիտարկման առցանց տեղեկատվական հարթակի ստեղծման և «բնակեցման» ծառայությունների ձեռք բերման

ԲԱԺԻՆ Ա. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Ծրագրի անվանումը՝	«ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման» ծրագիր (EU4STED)
Ծրագրի կառավարող՝	Էներգախնայողության աջակցման հիմնադրամ
Հիմնական շահառու՝ Ֆինանսավորման աղբյուր՝	Երևանի, Արթիկի, Ապարանի համայնքներ ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում

Երևան, Ապարան և Արթիկ համայնքները անդամակցելով ԵՄ «Քաղաքապետների դաշնագիր» նախաձեռնությանը պարտավորվել են մշակել Քաղաքի կայուն էներգետիկ (և կլիմայական) զարգացման գործողությունների ծրագիր (ԿԷԶԳԾ) և իրականացնել ծրագրի իրականացման մոնիթորինգ՝ համապատասխան հաճախականությամբ: «ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման» ծրագրի) **Գործողություն 1. «ՏԻՄ-երի էներգարդյունավետության և կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության նախաձեռնությունների մշտադիտարկում և բարելավում»** բաղադրիչի շրջանակում նախատեսվում է աջակցել համայնքների էներգետիկ ծրագրերի մոնիթորինգի իրականացման գործընթացին:

Այդ կապակցությամբ, Էներգախնայողության աջակցման հիմնադրամը (ԷԽՀ), սույնով, Եվրամիության ֆինանսավորմամբ «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով իրականացվող «ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման» ծրագրի շրջանակներում, հրավիրում է համապատասխան որակավորմամբ փորձագետներին՝ ներկայացնելու համապարփակ և ապահով հաշվետվողականության և մշտադիտարկման առցանց տեղեկատվական հարթակի ստեղծման, այդ հարթակի/ծրագրի «բնակեցման» և սպասարկման աշխատանքների/ոչ-խորհրդատվական ծառայությունների մատուցման առաջարկ:

Ծառայություն մատուցող փորձագետների համար առաջարկվող աշխատանքների շրջանակն ընդգրկում է (բայց չի սահմանափակվում) հետևյալը՝

- համապարփակ և ապահով հաշվետվողականության և մշտադիտարկման առցանց տեղեկատվական հարթակի ստեղծումը, որը ներառում է տվյալների համավաքագրման, վերլուծության և հաշվետվությունների տրամադրման էլեկտրոնային ծրագրի մշակումը,
- և այդ հարթակի/ծրագրի «բնակեցում»-ը, ինչը ներառում է նաև ծրագրի օգտվողների տվյալների բնականոն մուտքի և հավաքագրման կազմակերպումը, դասընթացի անցկացում
- սպասարկումը:

Տեխնիկական առաջադրանքը ներկայացված է Բաժին Գ.-ում: Համակարգչային հաշվարկավերլուծական փաթեթը կտրամադրվի այս հայտարարության արդյունքում գրավոր դիմած փորձագետներին:

### **Որակավորման չափանիշներ**

Դիմող փորձագետը պետք է ունենա տվյալների հավաքագրման բազայի և վերլուծության համակարգի ստեղծման և դրա հիման վրա «web based» ինտերֆեյսով տվյալների մուտքի և կառավարման հարթակների մշակման և ներդրման աշխատանքի կատարման 3 տարվա փորձ (պայմանագրերի քանակը, պայմանագրի չափը՝ ՀՀ դրամով):

### **ԲԱԺԻՆ Բ. ԱՐՁԱԳԱՆՔ ՀՐԱՎԵՐԻՆ**

Դիմող փորձագետներն իրենց ներկայացվելիք փաթեթներում պետք է ներառեն հետևյալը.

- Մասնակցության հայտը/նամակ
- Հայտատուի ինքնակենսագրական բնութագիրը (CV), որը ներառի փորձի նկարագրությունը նմանատիպ աշխատանքների իրականացման մեջ,
- որակավորումը հաստատող սերտիֆիկատներ և/կամ դիպլոմներ
- կոնտակտային տվյալներ
- գնային առաջարկը

Պայմանագիրը կնքվում է այն դիմողի հետ, որը հասնի հաշվարկային համակցված առավելագույն գնահատականին, տեխնիկական գնահատման (70%) և գնային առաջարկի (30%) հիման վրա:

Հայտը պետք է ներկայացվի մինչև 2019թ. փետրվարի 14-ը, ժ. 17:00, կամ էլեկտրոնային տարբերակով, կամ 2 տպագիր օրինակ (1 ստորագրված և կնքված բնօրինակ + 1 պատճեն), հասցեագրված՝

Ում՝ Տիկին Աստղինե Պասոյան,  
Տնօրեն Էներգախնայողության աջակցման հիմնադրամ (ԷԽՀ)  
Էլ. փոստ՝ [apasoyan@esfarmeria.org](mailto:apasoyan@esfarmeria.org); [astghine@gmail.com](mailto:astghine@gmail.com)

Հետևյալ հասցեով՝ Երևան 0010, Հայաստան 26/1 Վազգեն Սարգսյան փող., Գրասենյակ #414  
Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն  
Ընդունարան՝ +374 10 510451

Բջջային՝ +374 93 611619

Էլեկտրոնային տարբերակով հայտերի ներկայացումը, գործընթացի կամ բովանդակության վերաբերյալ պարզաբանում ստանալու հարցումները պետք է ներկայացվեն միայն գրավոր՝ ուղղված՝

Տիկին Աստղինե Պասոյան, Տնօրեն Էներգախնայողության աջակցման հիմնադրամ (ԷԽՀ) Էլ. փոստ՝ [apasoyan@esfarmeria.org](mailto:apasoyan@esfarmeria.org); [astghine@gmail.com](mailto:astghine@gmail.com) Բջջային՝ +374 93 611619

ԲԱԺԻՆ Գ՝ ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Հայտին կից գրություն

**Ում՝** Տիկին Աստղինե Պասոյան,

Տնօրեն Էներգախնայողության աջակցման հիմնադրամ (ԷԽՀ)

Էլ. փոստ՝ [apasoyan@esfarmeria.org](mailto:apasoyan@esfarmeria.org);

Բջջային՝ +374 93 611619

**Հասցե՝**

Երևան 0010, Հայաստան

26/1 Վազգեն Սարգսյան փող.,

Գրասենյակ #414 Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն

Ընդունարան՝ +374 10 510451

Թեմա՝ Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերի համար հաշվետվողականության և մշտադիտարկման առցանց տեղեկատվական հարթակի ստեղծում և «բնակեցում»

Հարգելի Տիկին Պասոյան,

Ի պատասխան 31.01.2019թ. հրապարակված Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերի համար հաշվետվողականության և մշտադիտարկման առցանց տեղեկատվական հարթակի ստեղծման և «բնակեցման» ծառայությունների ձեռք բերման համար մրցութային հայտերի Հրավերի, ես \_\_\_\_\_ (այսուհետ՝ Հայտատու) ցանկանում եմ արտահայտել մեր հետաքրքրությունը՝ ձեռնարկելու մրցութային հայտերի Հրավերում նշված միջոցառումները: Ցուցումների համաձայն, առդիր ներկայացնում ենք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (ընդհանուր XX էջաքանակով), տրված ուղեցույցներին/ձևաչափին համապատասխան, ձեր տեղեկությունների և գրառումների համար:

Հարգանքով,

(Ստորագրություն)

Անուն և Պաշտոն՝

Ամսաթիվ՝

Հասցե, կոնտակտային տվյալներ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

### I. Ընդհանուր տեղեկություն

Ծառայության անվանումը՝	Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրերի համար հաշվետվողականության և մշտադիտարկման առցանց տեղեկատվական հարթակի ստեղծում և «բնակեցում»
Պատվիրատուն՝	Էներգախնայողության աջակցման հիմնադրամ (ԷԽԱՀ)
Տևողությունը՝	4 ամիս
Վայրը՝	Հայաստան

### II. Նախապատմություն

«Քաղաքապետերի դաշնագիրը» (այսուհետ՝ Դաշնագիր) Եվրոպական Միության կողմից մեկնարկած նախաձեռնություն է, որը կոչված է համընդհանուր կամավորական պատասխանատվությամբ միավորելու տեղական ինքնակառավարման մարմիններին և տարածաշրջանային իշխանություններին՝ հոգուտ «կանաչ տնտեսական աճ»-ի և կյանքի որակի բարելավման: Դաշնագիրը ստորագրող համայնքները կամավոր կերպով համաձայնվում են իրենց վարչական տարածքների ներքո էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտներում իրականացնել համապատասխան գործողություններ, որոնք թույլ կտան մինչև 2020թ. առնվազն 20%-ով կամ մինչև 2030թ. 30 %-ով կրճատելու ածխաթթու գազի (CO2) արտանետումները՝ համայնքի կողմից ընտրված ելակետային տարվա արտանետումների մակարդակի համեմատ:

Դաշնագրին անդամակցող համայնքները պարտավորվում են մշակել Քաղաքի կայուն էներգետիկ (և կլիմայական) զարգացման գործողությունների ծրագիր (ԿԷԶԳԾ): Քաղաքապետերի դաշնագրին անդամակցած ՀՀ համայնքների կողմից մշակված և հաստատված ԿԷԶԳԾ ուղղությամբ չկա վերահսկման ազգային միացյալ մեթոդական հարթակ:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում մշակված «ՔՀԿ-ները հանուն կայուն և թափանցիկ էներգետիկ զարգացման» ծրագրով նախատեսվում է ստեղծել համակարգչային հաշվարկա-վերլուծական փաթեթ, որի հիման վրա միացյալ հաշվետվողական և մշտադիտարկման էլեկտրոնային համապատասխան առցանց հարթակ, ինչպես նաև առցանց հարթակի «բնակեցում» և տվյալների բնականոն մուտքի և հավաքագրման կազմակերպում: Սույն ծրագրի շրջանակում շահառու են հանդիսանում Քաղաքապետերին դաշնագրի անդամ հանդիսացող Երևան, Ապարան և Արթիկ համայնքները, սակայն նախատեսվում է համակարգի ներդրում նաև այլ համայնքներում:

### III. Մասնագիտական ծառայությունների շրջանակը

#### Առաջադրանքի նպատակը

Առաջադրանքի նպատակն է ԿԷԶԳԾ համար ծրագրի շահառու հանդիսացող Երևան, Ապարան և Արթիկ համայնքների համար

- համապարփակ և ապահով հաշվետվողականության և մշտադիտարկման առցանց տեղեկատվական հարթակի ստեղծումը, որը ներառում է տվյալների

համավաքագրման, վերլուծության և հաշվետվությունների տրամադրման էլեկտրոնային ծրագրի մշակումը,

- և այդ հարթակի/ծրագրի «բնակեցում»-ը, ինչը ներառում է նաև ծրագրի օգտվողների տվյալների բնականոն մուտքի և հավաքագրման կազմակերպումը, դասընթացի անցկացում
- սպասարկումը:

Հարթակի հիմնական օգտագործողներն են նշված համայնքների աշխատողները, ինչպես նաև շահառու կազմակերպությունների ներկայացուցիչները:

Առաջադրանքն իրականացվելու է Էներգախնայողության աջակցման հիմնադրամ ՀԿ, Կանայք կլիմայում և Էներգատիկայում ՀԿ, Աջակցություն բարեփոխումներին ՀԿ և Մարդկային կապիտալի զարգացման կենտրոն ՀԿ համագործակցությամբ: Առաջադրանքի իրականացումը համակարգվելու է Էներգախնայողության աջակցման հիմնադրամ ՀԿ և Կանայք կլիմայում և Էներգատիկայում ՀԿ կողմից: Ծրագիրը/առցանց հարթակը մշակելուց և առաջադրանքային պահանջները բավարարելուց հետո ծրագրի բոլոր իրավունքները հանձնվում են պատվիրատու կազմակերպությանը:

### **Իրականացվելիք գործողությունները**

Առաջադրանքի իրականացման շրջանակներում համապատասխան մասնագիտացված փորձագետը կատարելու է հետևյալ գործողությունները.

1. Համակարգողի հետ քննարկել՝
  - Հարթակի ստեղծման տարբերակները և գործընթացը
  - Անհրաժեշտ ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ պահանջները
  - մշտադիտարկման համար անհրաժեշտ տվյալները ցանկը, վերլուծության համար անհրաժեշտ հաշվարկները, հաշվետվության տրամադրման ձևաչափերը և դրանց հետ կապված տեխնիկական լուծումները
  - որակի ապահովման և անվտանգության, տվյալների պահպանման, հաշվարկների ճշգրտության և այլ խնդիրներ
  - համակարգից օգտվելու պահանջները (օգտատերեր, մուտք համակարգ, փոփոխության հնարավորություն, կառավարման/օգտագործման սահմանափակումները օգտատերերի համար)
  - տվյալների և համապատասխան տեղեկատվության օգտագործման գործընթացները, այդ թվում՝ ներբեռնում, տեղադրում, փոխանցում և այլն
  - տեխնիկական խնդիրները
2. Մշակել աշխատանքների իրականացման պլան և ստանալ համակարգողի հաստատումը
3. Ստեղծել տվյալների հավաքագրման և վերլուծության համապարփակ և ապահով համակարգ
4. Մշակել և տեղադրել անվտանգ և «web-based» էներգետիկ կառավարման տեղեկատվական հարթակ http(s) պրոտոկոլին ներկայացվող պահանջներով, որը պետք է հիմնված լինի տվյալների հավաքագրման և վերլուծության համակարգի վրա:
5. Հարթակը պետք է ունենա հետևյալ առանձնահատկությունները.
  - լինի օգտագործողի համար մատչելի (user friendly)

- ունենա օգտատերերի մուտքի համակարգ համայնքների համապատասխան աշխատողների, ինչպես նաև շահառու կազմակերպությունների ներկայացուցիչների համար
  - հնարավորություն ունենա շահառու համայնքների աշխատողների և շահառու կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից տվյալների մուտքագրման (օրինակ՝ ըստ տարիների քաղաքային լուսավորության արդիականացման շրջանակներում փոխարինված լամպերի քանակը, տեսակը, հզորությունները)
  - հնարավորություն լինի համապատասխան բաժիններում ներբեռնել տվյալներ
  - համակարգը մուտքագրված տվյալների հիման վրա պետք է իրականացնի ավտոմատացված հաշվարկներ (օրինակ փոխարինված լուսատուների արդյունքում կրճատված CO2 արտանետումները, խնայված էլեկտրաէներգիան և այլն)
  - հնարավոր լինի դիտել Internet Explorer, Google Chrome և այլ բրաուզերներով
  - հնարվոր լինի 100-300 օգտատերերի միաժամանակյա մուտք համակարգ
  - լինի ճկուն, տվյալների բազայում հնարավորություն լինի ավելացնել համապատասխան ցուցանիշներ/տողեր, որոնք ներառված կամ նախատեսված չեն հաշվարկա-վերլուծական փաթեթում (անհրաժեշտ է քննարկել համակարգողի հետ)
  - ունենա համակարգի անցանց տարբերակ
  - ունենա «որոնում» գործիքը
  - տվյալների և օգտատերերի անվտանգության ապահովման մեխանիզմներ
  - ունենա տվյալների հիման վրա հաշվետվությունների կազմման ֆունկցիա text, excel և/կամ pdf ձևաչափով
  - ունենա իրականացված բոլոր փոփոխությունների պատմություն՝ ըստ օգտատերերի
  - տվյալների ռեզերվային կրկնօրինակի պահպանման հնարավորություն
  - նոր ցուցանիշների, տարեթվերի, լրացուցիչ աշխատանքային լեզուների ավելացման հնարավորություն՝ ադմինիստրատորների կողմից:
6. Իրականացնել համակարգում և հարթակում անհրաժեշտ ճշգրտումներ, փոփոխություններ և բարելավումներ՝ ըստ համակարգողի պահանջի՝ հարթակի հանձնման պահից մեկ տարվա ընթացքում:
  7. Համակարգից օգտվելու համար համապատասխան գործընթացների սահմանում և ուղեցույցի կազմում
  8. Համակարգի «բնակեցման» աջակցություն, էքսել ձևաչափերի ավտոմատ ներբեռնման և բեռնման (էքսպորտ/իմպորտ) հնարավորություն,
  9. Համայնքների և համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչներին համակարգի ներկայացում/դասընթաց և խորհրդատվության մատուցում
  10. Համայնքների կողմից առաջացած հարցերի դեպքում՝ խորհրդատվական աջակցության տրամադրում:

*Հաշվարկա-վերլուծական փաթեթը կտրամադրվի գրավոր հայտ ներկայացնելու դեպքում:*

**Մասնագիտական ծառայությունների տևողությունը**

Առաջադրանքի շրջանակներում գործողությունների իրականացման հաշվարկային տևողությունը 4 ամիս է (2 ամիս համակարգի ստեղծման և 2 ամիս «բնակեցման» աջակցության, խնդիրների վերացման և սպասարկման համար)

#### **IV. Առաջադրանքի իրականացումից ակնկալվող առանցքային արդյունքները**

Առաջադրանքի իրականացումից ակնկալվող արդյունքներն են.

1. Միացյալ հաշվետվողական և մշտադիտարկման էլեկտրոնային համակարգ/ծրագիր, առցանց հարթակ
2. Առցանց հարթակի «բնակեցում» և տվյալների բնականոն մուտքի և հավաքագրման կազմակերպում
3. Համակարգից օգտվելու համար համապատասխան գործընթացների սահմանամերուղեցույց
4. Դասընթաց համայնքների և շահառու կազմակերպությունների ներկայացուցիչների համար
5. Խորհրդատվություն (help-desk) համայնքների և շահառու կազմակերպությունների ներկայացուցիչների համար